ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2015 թվական N 76–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով մարզադպրոցի սան Արթուր Ալեքսանյանի հայրենական սպորտի զարգացման, Հայաստանի Հանրապետության և Գյումրի քաղաքի մարզական փառքի բարձրացման գործում ունեցած մեծ ներդրումը, ինչպես նաև Եվրոպայի և աշխարհի առաջնություններում ցուցաբերած բարձր արդյունքները, ի կատարումն Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության <<Հունա-հռոմեական ըմբշամարտի մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխելու մասին>> N 204-Ա որոշման և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի <<Հունա-հռոմեական ըմբշամարտի մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության:
2. Հաստատել <<Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ 5 (հինգ) օրինակից՝ համաձայն հավելվածի:
3. Սահմանել կազմակերպության իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 91/1:
4. Հանձնարարել մարզադպրոցի տնօրեն Գևորգ Ալեքսանյանին՝ դիմել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան

Վ. Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Տ. Փանոսյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

15 հունիսի 2015թ.
ք.Գյումրի